ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2000 թվականի նոյեմբերի 30-ի ՀՕ-119 օրենքի (այսուհետ՝ օրենք) 4-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի՝

ա. 1-ին պարբերությունում «ստուգվող օբյեկտում պահվող ստուգման մատյանում» բառերը փոխարինել «տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) կողմից ստուգման հանձնարարագրում» բառերով,

բ. 2-րդ պարբերությունը հանել.

2) 2-րդ մասում «իսկ հաշվետու տարվա արդյունքներով» բառերը փոխարինել «իսկ ստուգվող ժամանակաշրջանի որևէ ֆինանսական տարվա արդյունքով» բառերով:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ պարբերության «թ» կետում վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ժ» և «ժա» կետերով.

«ժ. տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ կամ դրան նախորդող տարվա ընթացքում առնվազն երկու հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ օրենքով սահմանված հաշվետվությունների չներկայացման դեպքում՝ իրավասու պետական մարմնի ղեկավարի գրավոր հանձնարարությամբ.

ժա. տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտումներ կատարվելու փաստն այլ տնտեսավարող սուբյեկտում անցկացված ստուգման ընթացքում բացահայտվելու և հիմնավորվելու դեպքում՝ իրավասու պետական մարմնի ղեկավարի գրավոր հանձնարարությամբ:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ **Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**